

վարչական դեկր վարելու համար:

1918 թ. մայիս 30 թիֆլիս

Հայոց Ազգային Խորհուրդ

(Ս. Վրացյան 77 էջ 153):

«Այստիսով, Հայաստանի անկախության հայտարարության օրը՝ իսկադրեալ է համարվել մայիս 30-ը: Հակառակ դրան համարվում է մայիս 28-ը, այսինքն այն օրը, երբ Ազգային Խորհուրդը վճռեց հաճախության դատարանի կողմից հաստատված հայտարարությունը ուղարկել Բաթում: Անուղղակի կերպով, այս օրն էլ կարող է համարվել անկախության սկզբնավորություն, որովհետև հաճախության բանակցություններ վարելու համար նախադրյալներ էր անկախության հայտարարությունը»: (Ս. Վ. 77 էջ 154)

«Այստիսով, ըստ Բաթումի դաճնագրի, Հայաստանը դառնում էր անկախ մեծություն: Ահ ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցության մեջ, իբրև ազատ անձնավորություն միջազգային իրավունքի: Նրա հողի տարածությունը, մոտավորապես, 12.000 քառակուսի կիլոմետր էր, բնակչության թիվը, գաղթականներով միասին մոտ մեկ միլիոն: Եվ... մայրաքաղաքից յոթը կիլոմետր հեռու՝ երևում էին թուրքական թնդանոթներ...» (Ս. Վ. 77 էջ 156)

Հ. Քաջագունին իր «77 Դաճնակցությունը անելիք չունի այլևս» աշխատության մեջ անկախության հռչակման մասին գրում է. «Պես է՛ր արդյո՞ք անկախություն հայտարարեին, ի վիճակի է՞ին արդյո՞ք սեփական տեսություն կազմելու ու աղա թախելու այն...»

Պարտադիր հարցեր են սրան: 1918 թ. մայիսի վերջի օրերին այդպիսի հարցեր չէր կարելի դնել: Ընտրություններ անելու տեղ չէր մնացել: Պատմությունը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջև, ինչպես է հանդգնություն ունենալիս անցնել վրայից, եթե չէինք ուզում խորհրդակցել: Պես է՛ր սեր դառնալիս մեր հայրենիքին, աղա թե ոչ կկորցնեինք այն զուցե անդառնալիորեն»: (էջ 30)

Քաջագունին ավելացնում է. «Մի նոր դարաշրջան էր սա հայ ժողովրդի տասնության մեջ, վաղուց կորցրած ինքնուրույն տեսական կյանքի վերածնունդ»:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Հանրապետության հիմնադիրներն ու գործիչները ավելի ծիծես են գնահատում երևում են իրադարձությունները: Իրենք խոստովանում են, որ այլ ելք չկար, բացի անկախություն հռչակելը, եւ այն, որ դա իրականացրել էր Հայաստանը անկախ հայտարարել:

Խորհրդային տասնագրությունը նույնպես հանգամանորեն է անդրադարձել անկախության հարցերին: «Հայ ժողովրդի տասնություն», ակադեմիայի հրատարակչության 7-րդ հատում մասնավորապես ասված է «Ստեղծված դրությունը թելադրեց հայկական ազգային խորհրդին 1918 թվականի մայիսի 28-ին որոշում ընդունել Հայաստանը եւս «անկախ» հայտարարելու մասին» Աղա մեջ բերում է Վ. Ի. Լենինի խոսքերը. «Ումից է անկախ Վրաստանի կառավարությունը, Սովետական Հանրապետությունից նա անկախ է, բայց գերմանական իմպերատորից նա մի փչ կախյալ է, եւ դա բնական է... իսկ ինչպե՞ս է Հայաստանի ու Ադրբեյջանի «անկախության» մասին: Սրանք եւս անկախ էին միայն Սովետական Ռուսաստանից, սակայն կախյալ էին Թուրքիայից՝ մինչեւ վերջինի տարածությունը առաջին համաշխարհային պատերազմում, իսկ այնուհետեւ Անսանից» (նվաճած գրականություն էջ 45):

«Հայ ժողովրդի տասնություն» բուհական ձեռնարկի չորրորդ հատում անկախության մասին ասված է. «Դաճնակները մինչեւ այսօր էլ արտասահմանում նույն են Հայաստանի այդ «անկախության» օրը, սակայն ինչ անկախության մասին կարող էր խոսք լինել, երբ Հայաստանը օկուպացված էր թուրքական զավթիչների կողմից...»

1918 թ. հունիսին ընդունելով Կոստանդնուպոլսում հրավիրվելիք կոնֆերանսի հայկական դատարանի կողմից, թուրքիայի սուլթանը կեղծավորաբար ասել է՝ Հայաստանի անկախությունը թանկ է ինձ համար, եւս Հայաստանի կառավարությունը համարում են իմ հարազատ զավակը: (նույն տեղը)

Հ.Գ.Թուրքյանը իր «Սարգստապետի հերոսամարտը» գրքում անդրադարձել է նաեւ Հայաստանի անկախության հարցին, մեջ բերելով հունիսի 5-ի Ավ. Սահրոնյանի եւ Ն. Արքայանի ստորագրությամբ երեւանի հայոց ազգային խորհրդին ուղարկած նամակի հետեւյալ մասը. «Չե՛ր մղած մարտերի մասին իմացանք վեհիք Փաշայից, չգիտե՛նք, թե որքան են հավաստի նրա սկզբ տեղեկությունները, համենայն դեպս, մեր թեկուզ եւ փոքր ու թույլ Հայաստանով դատարան ենք մեր զորքի անձնուրացությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիներն ու թուրքերը կովկասը բաժանել էին Վրաստանի ու Ադրբեյջանի՝ հայերի համար աղախովելով միայն Ֆիզիկական գոյություն: Պես է՛ր ենթադրել, որ մեր զորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ծանաչել Հայաստանը»: Թուրքյանը գրում է. «Գոնե՛ ինքնասիրություն ունենալիս եւ հայկական անկախության սկիզբը համարել մայիսի 22-ը, Սարգստապետի առաջին ծակասամարտի օրը, այլ ոչ թե թուրքերի վերջնագիրն ընդունելու համար թիֆլիսից հայկական առանձին դատարանություն ուղարկելու օրը: Որդիսի՛ անկում»: (նվաճած աշխատություն էջ 200)

Որքան ավելի օբյեկտիվ են Հայաստանի Հանրապետության գործիչներն ու հիմնադիրները անկախության հռչակման գնահատման հարցում, նույնքան սուբյեկտիվ են հետազայում սփյուռքում այս հարցով զբաղվողները: Գրում են գունազարդումներով, հերոսական շնչով ու ոգով, կարծես թե հենց իրենք են կատարել այդ փառաբանությունները:

Բ.Ս.Օհանջանյանը իր «Դաճնակցությունն առանց դիմակի» գրքում մեջ բերելով Կ. Սասունու հետեւյալ խոսքերը «... Ու 28 տարիներում Դաճնակցության հերոսական ավյունը, ավիճը, աղբյուր կամրդ լիցի գար միախառնվելու ծակասամարտներում մեջ գոհվող հերոսներու արյունին եւ կերտեր ազատ ու անկախ հայրենիքը, միայն ու միայն իր ուժերով ու անհուն գոհողություններով», գրում է, որ Կ. Սասունու նպատակը այն է, որ թուրքիստանից մեջ գցել սփյուռքի երիտասարդությանը, փրկել իր կուսակցությունը: Օհանջանյանը այնուհետեւ ֆնտազասում է Ս. Կալյանին, որի կարծիքով Բաթումի դաճնագիրը ոչ թե նվաստացուցիչ է հայ ժողովրդի համար, այլ՝ «ընդհակառակը հաղթանակ էր, հողատիրոջ նվաճում էր, հայ ժողովրդի դարավոր գերության ամրակուր շրջաններում խորհրդային եր հայ ժողովրդի համար»: Կալյանը շարունակում է. «Պիտի համարձակվիմ ըսել նույնիսկ, որ հոն... հոն Հայաստանն ու հայ ժողովուրդը դատարար են նվաճումներ կատարեցին եւ հաղթանակեցին... Մինչդեռ Բաթումի դաճնագրով հայ ժողովուրդը իր ոխերիմ թնամիսին կլափեր, կխլեր դատարար մը հող գոնե եւ հիմը կդներ իր անկախ տեսության»:

Այնուհետեւ Կալյանն ասում է, որ Բաթումը «վեմը, հիմնադրը կկազմեր անկախ Հայաստանի»:

Բ. Ս. Օհանջանյանը Բաթումի դաճնագիրը համարում է հայ ժողովրդի համար նվաստացուցիչ եւ զսնում է, որ Կալյանը կեղծում է տասնությունը: (նույն տեղ)

Ըստ Օհանջանյանի Դաճնակցական գրականության մեջ ջանք է թափվում մի կերպ աղաջուցել, թե Հայաստանի անկախ հանարապետության ստեղծումը հետեւանին էր Սարգստապետի, Աղառանի եւ Ղարափիլիսայի ծակասամարտի: Օրինակ Կ. Սասունին գրում է. «Հայկա-»



կան վճռական հարվածները սասկացան նահանգող թուրքերուն դեմ: Թժնամին Պարսութեան մասնված էր եւ գիտակցելով այդ իրողութիւնը, չստասեց ստրկարկեց հոգեբանութեան ծավալումին: Հաճութիւնը առաջարկեց, ու մենք հաճութեան ընդառաջեցինք: Այս արջան հեղեղներեն ծնունդ առավ մայիսի 28-ի անկախութեան հայտարարութիւնը»:

Բ.Ս.Օհանջանյանը անդրադառնալով նույն հարցին գրում է. «Փաստ է, որ Սարդարաղաշի ճակատամարտում հայ ժողովրդի տարած հաղթանակի շնորհիվ թուրքական զորքերը չկարողացան մտնել Երեւան, կանգնեցվեց օսմանյան բանակների հետագա առաջխաղացումը Արարատյան դաշտում եւ դա հայ ժողովրդի խոճոք նվաճումն էր: Բայց որ թուրքական զորքերը իրեն հաղթող ծանաչեց եւ իր կամքը թելադրեց «անկախ» Հայաստանի Բաթում բանակցութիւնների մեկնած ներկայացուցիչներին, դա եւս փաստ է»:

(Դաճակցութիւնը առանց դիմակի էջ 124-125)

Այնուհետեւ Բ.Ս.Օհանջանյանը անդրադառնալով Կ. Սասունու վերոհիշյալ մտերին գրում է. «Իր միամիտ ընթացողներին Կ. Սասունին ուզում էր ասել, որ ոչ թէ Անդրկովկասի «անկախ» թեւութիւնների ղեկավարներն էին շատուն թուրքիայի հետ հաճութիւն կնքելու, այլ «դարսված» թուրքիան էր, որ շատուն էր ծնկի գալ «հաղթած» Հայաստանի ղեկավարների առջեւ: Եթե իսկապէս, Հայաստանը հաղթել էր թուրքիային եւ վերջինս հաճութիւն էր աղերսում, ապա ինչու՞ «հաղթանակած» Հայաստանն իր տերիտորիայի մոտ հինգ վեցերորդը սկեց «դարսված» թուրքիային»:

(նույն տեղը)

Այդ մասին թե անկախութեան հռչակումը որքանով էր կաղված Սարդարաղաշի, Աղարանի եւ Ղարաբիլիսայի հերոսամարտերին, Բ.Ս.Օհանջանյանը գրում է. «Ճճարհի էր նաեւ այն, որ երբ մայիսի 26-ին եւ 27-ին «անկախութիւն» շնորհվեց եւ Վրաստանին, եւ Ադրբեջանին, իսկ

28-ին՝ Հայաստանին, Թիֆլիսի հայ ազգային խորհուրդը տեղակ չէր Սարդարաղաշի հերոսամարտից: Ավելին անգամ հունիսի 4-ին «անկախ» Հայաստանի ներկայացուցիչները, երբ ստորագրում էին Բաթումի խիստ նվաստացուցիչ թայմանագիրը, գաղափար չուներին Սարդարաղաշի դեղմերի մասին»: (նույն տեղը)

Վերջում լուրջ էր ասել, որ փաստը մնում է փաստ, որ 600 տարի լուրջանութեան բացակայութիւնից հետո, 1918 թ. մայիսին ծնունդ առավ Հայաստանի Հանրապետութիւնը եւ այսօր Հայաստանի երկրորդ հանրապետութեան օրերին մեծ շուքով տնվում է անկախութեան օրը:

Ա.ԱՅՎԱԶՅԱՆ

Օգտագործված գրականութիւն

- 1-Ա.Վրացյան «Հայաստանի Հանրապետութիւն», Ալիք տարան, 1982 թ. Թեհրան:
- 2-Ա.Վրացյան «Կյանքի ուղիներով», Սեակ տարան, Բեյրութ, 1965 թ. Դիասոր:
- 3-Հովհաննէս Քաջագունի «ՀՀ Դաճակցութիւնը անելիք չունի այլեւս», Միթարյան տարան, Վիեննա 1923 թ.
- 4-Ալ. Խասիսյան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը», Համազգային տարան, Բեյրութ, 1968 թ.
- 5-Հ. Իրազեկ «Մոտիկ անցյալից», Համազգային տարան, Բեյրութ, 1965 թ.
- 6-Հայ ժողովրդի թատնութիւն» Հայկական ԽՍՀ գիտութիւնների Ակադեմիայի հրատարակչութիւն, Երեւան 1967 թ. 7-րդ հատոր:
- 7-Հայ ժողովրդի թատնութիւն», Լույս հրատարակչութիւն, Երեւան 1970 թ. 4-րդ հատոր:
- 8-Հ.Գ.Թուրեյան «Սարդարաղաշի հերոսամարտը», Հայաստանի հրատարակչութիւն, Երեւան 1967 թ.
- 9-Բ.Ս.Օհանջանյան «Դաճակցութիւնն առանց դիմակի», Հայաստան հրատարակչութիւն, Երեւան 1980 թ.